



«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

10.02.2021թ.

**ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
Պարոն Գնել Սանոսյանին**

**«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80**

Հարգելի պարոն *Սանոսյան*

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում: ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. 2019-2020թթ. մարզի ո՞ր համայնքներում են իրականացվել սուբվենցիոն ծրագրեր, ի՞նչ ծրագրեր են եղել: *Նշել համայնքի, ծրագրի նկարագրության մասին տեղեկություններ՝ ըստ տարիների առանձին-առանձին:*
2. 2019-2020թթ. մարզում որքա՞ն է կազմել սուբվենցիոն ծրագրերով պետության հատկացրած և համայնքի մասնակցության գումարի չափը: *Տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների, համայնքների և ծրագրերի:*
3. 2019-2020թթ. ո՞ր ընկերություններն են իրականացրել սուբվենցիոն ծրագրերը և որքան է կազմել պայմանագրային գումարի չափը: *Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների, տարիների և աշխատանքներն իրականացրած ընկերությունների, գումարի չափի:*
4. 2019-2020թթ. ընթացքում պլանավորված սուբվենցիոն ծրագրերից որո՞նք չեն կատարվել և ինչ պատճառաբանությամբ: *Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների՝ նշելով չիրականացման պատճառը:*
5. 2020թ. մեկնարկած քանի՞ սուբվենցիոն ծրագիր է շարունակվելու 2021թ-ին և որն է 2020թ-ին դրանք չավարտելու պատճառները: *Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների և ծրագրի անվանման՝ նշելով պատճառը:*
6. 2020թ. Ադրբեջանի կողմից Արցախում սանձազերծած պատերազմից հետո մարզի ո՞ր համայնքներն են դարձել սահմանամերձ և նշված համայնքներում 2020թ. ինչ սուբվենցիոն ծրագրեր են իրականացվել, որ ընկերություններն են իրականացրել և ինչ արժեքով: *Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների նշելով սուբվենցիոն ծրագրերի բնույթը,*

աշխատանքներն իրականացնող ընկերությունների անվանումները և պայմանագրի գումարի չափը:

7. 2020թ. Ադրբեջանի կողմից Արցախում սանձազերծած պատերազմից հետո սահմանամերձ դարձած համայնքներում ո՞ր սուբվենցիոն ծրագրերն են կիսատ մնացել և ինչ պատճառով:
8. 2020թ. Ադրբեջանի կողմից Արցախում սանձազերծած պատերազմից հետո սահմանամերձ դարձած համայնքներում պետության մասնակցությամբ իրականացված ծրագրերով վերանորոգված, կառուցված ի՞նչ շինություններ, կառույցներ են անցել Ադրբեջանի վերահսկողության տակ: Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների, կառույցների:
9. 2020թ. ո՞ր համայնքներում չեն իրականացվել արդեն հաստատված սուբվենցիոն ծրագրերը և ինչ պատճառով: Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների՝ նշելով ծրագրի նկարագրության, համայնքի և պետության մասնակցության մասին տեղեկություններ՝ առանձին-առանձին:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գ. Բալասանյան

